

ՊԵՇՏՕՒՆԵԿԸ:

ՔԱՂՈՒՄԵՆՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԱՆՆՅՈՒՄ ԸՐՐՈՅ
ԷԶՈՒՄՆԵՆԻ:

բերար, տաք ու անկեղծ սրտով այս
տարւոյս վերջին ժամերիս մէջ: Շնոր-
հակալ եմ քո երկայնամուտ թեանէն իմ
մեղանշական բնութեանս համար: Շն-
որհակալ եմ հաղորւոր տեսակ տե-
սակ ուրախութիւնների համար, որով
ինձ մխիթարեցիր եւ ուրախացուցիր:
Շնորհակալ եմ քո հայրական օգնու-
թեանդ համար, որ ինձ այն ժամանակ
հասաւ, երբ որ աւելի մեծ նեղութեան
մէջ ինձ կտեսնէի, եւ երբ որ աւելի
պէտք ունէի քո օգնութեանդ, երբ որ
բոլորովին յոյսս կարած, մնորումս
տարակուսած, աղաւաղու հնարն
չէի գտներ եւ ամեն ճանապարհ առա-
ջեւս փակուած կտեսնէի: Շնորհակալ
եմ քեզ այն կարօղութեան համար, որ
ինձ պարգեւած ես բարին գործելու
թէ եւ այն ոյժս եւ զօրութիւնս
միշտ բարին գործելու համար բանե-
ցուցած չեմ: Շնորհակալ եմ քեզ, Տէր,
այն հոգացողութիւններիդ համար,
որով ինձ եւ իմ բնատանիքս շատ վը-
տանգներէ ազատեցիր: Շնորհակալ եմ
նաեւ այն ցաւերին համար, որ ես ան-
ցած տարուան մէջ կրեցի, որոնք քո
պատգամաւորներն էին, որ ինձ կյոր-
գորէին միտքս բերելու քեզ եւ իմ կա-
շունս յաւիտենականութեան համար:
Ս, յո, շնտ կերպով եւ շնտ անգամ ըզ-
գացած եմ այս, որ դու՝ «էր էս, և քո
«սրեղծած աշխարհի մէջ ոչ մի վատ բան չկայ
բաց ի մեղէն», որ մենք կը սրբենք:»

Նախկին վանահայր Սուրբ Խոս փա-
նուց Նոր Նախիջեւանայ Առհակ վար-
դապետն Բաղդասարեան վասն անբա-
բոյականութեան եւ անվայել իւրումն
կոչման չարաչար գնացիցն վասնելով
զինչ ինչ եկեղեցական զարգս եւ անօ-
թըս, անօրէնութեամբ Աինօղի Սրբոյ
Էջմիածնի եւ բարձմամբ վեղարի եւ փի-
լոնի առաքեցաւ հնգամեայ ժամանա-
կաւ յապաշխարութիւն ի Վանս Սեւա-
նայ Անապատի, որպէս զի կացեալ անդ
կրբեւ լոկ ունինդիր ընդ աշխարհական
սղօթողս, քաւեսցէ զյանցանս իւր
զըջմամբ, ազօթիւք եւ պահօք:

Չայսմանէ ընդ ձեռն Արարաւ ամ-
սագրոյ հրատարակի ի զգուշութիւն
եւ ի խրատ Վանահարց Վանօրէից ա-
մենայն վիճակաց:

Շմասն քահանայն տէր Բաղդասա-
րեան Բլէրանց գեղջ Արարաղու վիճա-
կի վասն տալոյ զհրաման թոյլատրու-
թեան պսակի Աղօխեցի Ազամայ Բա-
բայեան ընդ Նաշխունի Բաղասեան ի
չհասականաստիճանի ազգակցութեան,
անօրէնութեամբ Աինօղի Սրբոյ Էջմի-
ածնի ի ՉՏն յուլիսի 1878 ամի արգե-
լաւ ի քահանայազօրութեանէ զամս
երիս:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

Հայրապետ քահանայն Գօլուխա-
նեան Աւետարանոց գեղջ Արարաղու

վիճակի վասն կատարելոյ գաղտնապէս
ի տան զպսակ նոյն գիւղացի Սմբատայ
Յովսէփ - Բէկեան Վարաթեան ընդ
Լիզինկայի Խորայէլ - բէկեան Մելիք
Շահնազարեան ի չհասական աստի-
ճանի ազգակցութեան առանց հրամա-
նի մերձաւոր Հոգեւոր իշխանութեան
եւ գործակալին, անօրէնութեամբ Ար-
նոզի Սրբոյ Էջմիածնի ի 25 սեպտեմ-
բերի 1878 ամի ենթարկեցաւ ի ներքոյ
հնգամեայ ապաշխարանաց ի միում ի
Վանօրէից վիճակին Շուշուոյ:

Եսայի քահանայն Նաջաւեան Շու-
շի քաղաքի վասն կատարելոյ գաղտ-
նապէս եւ առանց թոյլատրութեան եւ
հրամանի Հոգեւոր իշխանութեան եւ
գործակալին զպսակ աստիճանաւոր
Պաւլէ Եսայի — բէկեան Գանիէլ — բէ-
կեանի ընդ դստեր Համբարձում —
բէկի Սարուխան — բէկեան ի չհասա-
կան աստիճանի ազգակցութեան են-
թարկեցաւ ի ներքոյ հնգամեայ ապաշ-
խարանաց ի միում ի Վանօրէից վիճա-
կին Շուշուոյ:

Գանիէլ քահանայն տէր Գանիէլեան
Շուշի քաղաքի վասն գիտակցաբար կա-
տարելոյ զխորհուրդ պսակի ի վերայ
Թաղազիւլի Մուսայէլեան ընդ Սարգսի
Միքայէլեան առ կենդանութեամբ առն
առաջնոյն, անօրէնութեամբ Արնոզի
Սրբոյ Էջմիածնի 130 հոկտեմբերի 1878
ամի ենթարկեցաւ ի ներքոյ չորսս-
մեայ ապաշխարանաց ի միում ի Վա-
նօրէից վիճակին Շուշուոյ:

Տփխիսարնակ պարոն Նազարի Սօ-
վեանիկ Գրիգորն Իզմիրեան շարժեալ
յազգասիրական զգացմանց իւրոց նուր-
բեալ է գսեփհական երեք յարկեան
տուն իւր ի Տփխիս քաղաքի հանդերձ
ընդ նովաւ գտանեցեալ կրպակօք եւ
նկուզիւք, որոյ արժէքն ըստ գնահա-
տութեան հասանէ ց16000 ռուբլի յօ-
գուտ Նորաշէն եկեղեցւոյն Սուրբ Աս-
տուածածնի տեղւոյն եւ Մարիամեան
ուսումնարանի, որոյ մասին Արնոզս
Սրբոյ Էջմիածնի համաձայն առաջար-
կութեան Թեմակն Ատենին անօրի-
նեաց ըստ օրինի խնդրել զԿարճրագոյն
հաճութիւն ընդ ընդունելութիւն յի-
շեալ տանն եւ ընդ հաստատութիւն
օրինաւոր կալուածագրոյ:

Հին Նախիջեան քաղաքի բնակիչ
արգոյ Մկրտիչն Թունեան հոգւով բա-
րեզաշտութեան նուիրեալ է ի պէտս
յաջորդարանի տեղւոյն գտուն իւր կա-
ռուցեալ ի նմանէ ի վերայ եկեղեցա-
պատկան գեանոյ, զոր կալուած Ար-
նոզն Էջմիածնի ընդունելով հաճու-
թեամբ արձանագրեաց ի թիւս կա-
լուածոց Աթոռոյս սրբոյ Էջմիածնի:
Նոյն պարոնն խոստացեալ է բաց յայն-
մանէ կառուցանել եւ զայլ նոր շի-
նուած ի պէտս ծխական դպրոցի Նա-
խիջեանայ առ ի կրթութիւն եւ ի լու-
սաւորութիւն մանկանց եւ վասն այս-
պիսի աստուածահաճոյ նուիրանացն
նորա առաքեցաւ առ պարոն Թունեա-
նըն գիր շնորհակալութեան ի գիմաց
Արնոզի: